

Տ. ՏՐԴԱՏ ԱԻԱԳ ՔԱՀԱՆԱՅ ՈՒԶՈՒՆԵԱՆ

Պատրիարքութիւն Հայոց Թուրքիոյ

ՍՈՒՐԲ ԳՐՈՅ ԿԱՐԵՒՐՈՒԹԻՒՆԸ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՆԿԱՆ ԱՐԴԻ ԺԱՄԱՆԱԿԱՆՐԱՅՈՒՆԻ ՄԷՁ¹

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Այնպիսի ժամանակաշրջանի մը մէջ կ'ապրինք, որ անտարբերութիւնը եւ բարոյական անկումը երբեւիցէ այդքան չէին բարձրացած մարդկային պատմութեան ընթացքին: Տնտեսական ճգնաժամերը, անվերջ պատերազմները, բարոյականութեան յարաբերականութիւնը, հաւատքի ու հոգեւոր արժէքներու նկատմամբ անտարբերութիւնը եւ նիւթապաշտութիւնը կը ձեւաւորեն աշխարհի գլխաւոր գաղափարախօսականը՝ «անձնասիրութիւն ու հաճոյապաշտութիւն», որուն հետեւանքն է, մանաւանդ երիտասարդաց մէջ, անհեռանկար կեանքը եւ յուսալքութիւնը: Այս ոչ միայն կ'ազդէ մարդկային տարբեր խաւերուն վրայ, այլ նաեւ իր կործանարար դերը կը խաղայ երիտասարդներուն կեանքին մէջ, որոնք տարբեր հոգեբու եւ մտահոգութիւններու, աշխարհիկ եւ բարոյական ճնշումներու, ապագայի նկատմամբ անորոշութիւններու տակ կը տառապին: Ընկերային ԶԼՄ-ները, համացանցի սանձարձակ օգտագործումը, թուային խաղերու գործածութիւնը երբեմն օրուայ ամենարդիւնաւէտ ժամանակները կը խլեն երիտասարդներէն եւ կը մղեն զանոնք անհեռանկար կեանքի եւ երեւակայական² աշխարհի մը: Դեռ չենք խօսիր ցոփագրութեան³, համացանցային անբարոյ ընկերակցութիւններու եւ դրամախաղերու մասին, որոնք արդէն քաղցկեղի նման տարածուած են ամենուրեք:

Մեր հովուական փորձառութիւնը ցոյց կու տայ, թէ վերոյիշեալ պարագան գլխաւոր մարտահրաւէրն է կամ պէտք է ըլլայ իւրաքանչիւր եկեղեցականի, քարոզչի, աստուածաբանի եւ հոգեւոր հովիւի: Սուրբգրային

^{1*} Ստացուել է՝ 9.09.2024, գրախօսուել է՝ 10.10.2024: Էլ. հասցէ՝ duzunyan@gmail.com:

² Իմա՝ անգլ.՝ virtual, լատ.՝ virtus – ուժ, հնարաւորութիւն:

³ Իմա՝ πορνογραφία – գրութիւն անբարոյի մասին:

քարոզչությունը, որ առաջնային գործունեությունն է եկեղեցուց, բոլոր ժամանակներէ աւելի կարեւոր է ներկայ շրջափուլին:

Թէեւ ամենուրեք կենսական է Աստուածաշնչային պատգամի տարածումը բոլոր խաւերու եւ մթնոլորտներու մէջ, մեր այս յօդուածը պիտի սահմանափակենք միայն երիտասարդաց առաքելութեան ծիրին մէջ, այն եկեղեցասէր եւ հաւատացեալ երիտասարդներուն, որոնք կարեւորութիւն կու տան քրիստոնէական հաւատքին եւ փափաքն ունին աստուածահաճոյ կեանք մը ապրելու: Տարբեր մակարդակներու վրայ գտնուող այս երիտասարդները առերեսուելով վերոյիշեալ մարտահրաւէրներուն պէտքն ունին առողջ, արդիական սուրբգրային դաստիարակման եւ Աստուածային գրոց ուղիղ ուսուցման:

Մեր երեսուն տարուայ եկեղեցական եւ հովուական փորձառութենէն, երիտասարդներու հետ ունեցած շփումներէ եւ զանազան երկիրներու մէջ մեր ունեցած հանդիպումներէ եւ աշխատանքներէ ստացած տպաւորութիւններէն քաղած տուեալներն են, որոնք պիտի ներկայացնենք մեր այս յօդուածին մէջ:

Նախ՝ ներկայացնենք, թէ ինչպիսի երիտասարդական հարցաքննող միտքերով շրջապատուած ենք: Մեր հովուական եւ սուրբգրային սերտողութեան դասընթացներու ժամանակ հանդիպած հարցումներէն քանի մը օրինակներ կու տանք՝ ցոյց տալու համար, թէ ինչպիսի հարցեր կը պատահին: Արդի աստուածաբանական մթնոլորտի եւ գիտական աշխարհի մէջ տարուած են եւ կը տարուին աշխատանքներ, ուր հնախօսութիւն-հնագիտութիւնը, պատմագիտական եւ բնագրագիտական վերլուծութիւնը, եբրայեցերէնի, յունարէնի եւ բնագրերու ուսումնասիրութիւնը, գիտական եւ ուսումնական տարաբնոյթ աշխատասիրութիւններ հիմնաւոր պատասխաններ գտնել կը ջանան եւ գտած են այս նիւթերու վերաբերեալ⁴:

Ահա քանի մը օրինակներ՝

Պատմական խնդիրներ, որոնք էութեան մէջ կարեւոր կրնան չնկատուիլ, սակայն կրնան խախտել երիտասարդին վստահութիւնն Աստուծոյ հօսքին հանդէպ:

⁴ Վերջերս հանդիպած ենք աշխատութիւն մը, որ մանաւանդ երիտասարդներուն հասցէագրուած է: Հեղինակն ինքը կը վերլուծէ զանազան դժուար խնդիրներ եւ պատասխաններ կու տայ անոնց. BRETT MCCracken, Uncomfortable: The Awkward and Essential Challenge of Christian Community, Published by Crossway, Wheaton, Illinois, USA, 2017:

• Ինչո՞ւ մասնաւորապէս Թագաւորութեանց գիրքերու մէջ յիշատակուած Յուդայի եւ Իսրայէլի թագաւորներու տարիներու հաշիւները չեն համապատասխաներ իրարու: Զոր օրինակ՝ Իսրայէլի Յէու արքայի եօթներորդ տարին Յուդայի վրայ կը թագաւորէ Յովաս: Այս տարիէն մինչեւ Սամարիայի անկումը, որ տեղի ունեցաւ Եզեկիայի վեցերորդ տարին, տրուած Իսրայէլի թագաւորներու գահակալութեան տարիներուն գումարը 136 տարի է, իսկ Յուդայի թագաւորներու տարիները՝ 159⁵:

• Ինչպէ՞ս պատասխանել այն պնդումին, թէ Մովսէս միաստուածեան կրօնի գաղափարը յղացած է փարաւոն Ամենոփիս Դ.-է (Աքէնաթօն – մահ՝ ն. Ք. 1336⁶):

⁵ Սուրբ Գրոց համապատասխան համարները հետեւեալն են. Ամբ թագաւորութեան Յէու – Բ. Թագ. Թ. 1–10, Յէուն օծուած է Իսրայէլի թագաւոր. Բ. Թագ. Ժ. 36, Յէուն թագաւորում է Իսրայէլի վրայ 28 տարի: Ամբ Յովասի թագաւորութեան – Բ. Թագ. ԺԲ. 1 (ԺԱ. 21) – Յովասը դառնում է Յուդայի թագաւոր՝ Յէուի թագաւորութեան 7-րդ տարում, Բ. Մնաց. ԽԻ. 1 – Յովասի գահակալութեան տարիքը (7 տարեկանում թագադրուել է, թագաւորել է 40 տարի), Եզեկիայի օրոք Սամարիայի անկումը – Բ. Թագ. ԺԸ. 9–10 – Ասորեստանի թագաւոր Սալմանասարը պաշարում է Սամարիան եւ գրաւում այն Եզեկիայի 6-րդ տարում: Թագաւորների տարիների հակասութիւնները – Բ. Թագ. Գլ. ԺԵ.–ԺԷ. – Բազմաթիւ թագաւորների գահակալութեան թուերը բերուած են, սակայն գումարելիս առաջանում են տարբերութիւններ: Այս թուաբանական խնդիրը երկար տարիներ քննարկել են աստուածաբանները, պատմաբաններն ու մեկնիչները: Այն առաջացել է տարբեր հաշուարկային համակարգերի, համատեղ թագաւորութեան (co-regency) եւ տարբեր աւանդոյթների պատճառով: Տե՛ս E. R. THIELE, *The Mysterious Numbers of the Hebrew Kings*, Zondervan/Kregel, 1983, էջ 253–256: Այս աշխատութիւնը համարում է ներկայ ասպարէզի հիմնարար ուսումնասիրութիւն, որտեղ Թիլէն վերլուծում է երբայեցուց թագաւորների գահակալութեան տարիների թուաբանական խնդիրները՝ առաջարկելով լուծումներ՝ հիմնուած համատեղ թագաւորութեան (co-regency) եւ տարբեր հաշուարկային համակարգերի վրայ: Հմմտ. G. F. HASEL, *New Light on the Book of Kings from the Ancient Near East*, *Biblical Archaeologist*, Vol. 31, № 2, 1968, էջ 33–66: Հասելը քննարկում է Թագաւորութիւնների գրքերում առկայ ժամանակագրական տուեալները՝ համեմատելով դրանք Հին Մերձաւոր Արեւելքի այլ աղբիւրների հետ եւ անդրադառնում է հաշուարկային համակարգերի տարբերութիւններին: Տե՛ս նաեւ W. H. BARNES, *Studies in the Chronology of the Divided Monarchy of Israel*, Scholars Press, 1991: Այս ուսումնասիրութիւնը կենտրոնանում է բաժանուած թագաւորութեան ժամանակաշրջանի ժամանակագրութեան վրայ՝ անդրադառնալով թագաւորների գահակալութեան տարիների հաշուարկի բարդութիւններին: Այս աղբիւրները կրնան օգտակար ըլլալ հասկանալիս, թէ որպէս տարբեր հաշուարկային համակարգեր, համատեղ թագաւորութիւններ եւ աւանդոյթներ ազդած են Իսրայէլի եւ Յուդայի թագաւորաց գահակալութեան տարիների հաշուարկի վրայ:

⁶ Տե՛ս Encyclopædia Britannica, Akhenaten. <https://www.britannica.com/biography/Akhenaten> (17.09.2021):

⁷ Նոր ուսումնասիրութիւններ ցոյց տուած են, թէ Մովսէս ապրած է ոչ թէ փարաւոն Ռամսէս Մեծի (ն. Ք. 1290–1225 թթ.) եւ Մենեփթայի (ն. Ք. 1225–1215 թթ.) ժամանակ, ինչպէս կը կարծուի, այլ Թութմոս Գ.-ի (ն. Ք. 1458–1425 թթ.) օրոք: Ուստի՝ եթէ փոխադրեցութիւն գոյութիւն ունի, Ամենոփիս Դ.-է պէտք է ազդուած ըլլայ:

• Ե՛րբ է Եգիպտոսէ ելքի թուականը, եւ ինչո՞ւ տարբեր թուականներ նշուած են զանազան գիրքերու մէջ⁸:

Մարգարէութիւններու վերաբերեալ խնդիրներ, որոնք կրնան շատ լուրջ սխալ տպաւորութիւն թողուլ երիտասարդի մտքի մէջ: Քանի մը օրինակներ՝

• Ղուկասի Աւետարանին մէջ՝ Եսայիի «...կոչեսցի անուն նորա էմմանուէլ» (Ես. է. 14) մարգարէութեան իրականացումը կ'ընդունուի որպէս մեր Տէր Յիսուսի ծննդեան կանխասացութիւն: Եթէ այդպէս է, ինչո՞ւ «Յիսուս» կոչեցին եւ ոչ թէ՝ «էմմանուէլ»: Իսկ եթէ կ'ըսենք՝ հրեշտակի պատուէրն էր, որ «Յիսուս պիտի կոչուի» (Ղուկ. Ա. 31), ուրեմն այս ինչպէ՞ս «էմմանուէլին» մարգարէութեան իրականացում կը սեպուի⁹:

• Ինչպէ՞ս մեկնաբանել Նոր Կտակարանի՝ մարգարէներու «նազովրեցի կոչեսցի» խօսքերուն կատարումը, երբ այդպիսի մարգարէութիւն գոյութիւն չունի¹⁰:

Բնագրային խնդիրներ, որ պէտք է ըսել, թէ ամենաշատ հանդիպած է, եւ երբեմն դասի ընթացքն իսկ կրնայ խանգարել: Քանի մը օրինակներ ալ այս նիւթի շուրջ՝

• Ինչո՞ւ Սուրբ Գրոց տարբեր կանոններ գոյութիւն ունին: Եթէ նկատի չառնենք Բողոքական աւանդութեան կանոնը, որ Լուտերով սկսած է, ուղղափառներու միջեւ իսկ կան տարբեր կանոններ: Եթովպիոյ Եկեղեցին կ'ընդունի հինգ այլ գիրքեր եւս Սուրբ Գրոց կանոնին մէջ¹¹: Որո՞նք պիտի ընդունինք որպէս ներշնչուած կանոնական գիրքեր:

⁸ Ելքի թուականին եւ Հին Կտակարանի որոշ թուականներու վերաբերեալ մեր տեսակէտը պարզած ենք մեր յօդուածին մէջ. տե՛ս Տ. ՔՀՆՅ. ՈՒԶՈՒՆԵԱՆ, Իսրայէլ ո՞ր թուականին ելաւ Եգիպտոսէն, ԵՊՀ-ի աստուածաբանական ֆակուլտետի Տարեգիրք, Երեւան, 2017, էջ 263–282:

⁹ Այս նիւթով հրատարակած ենք ուսումնասիրութիւն մը՝ Տ. ՔՀՆՅ. ՈՒԶՈՒՆԵԱՆ, Սուրբ Գրային վերլուծութիւններու բնագրագիտական, պատմական եւ մեկնողական մերձեցում մը, «Տարածաշրջան եւ աշխարհ» գիտավերլուծական հանդէս, հտ. XII, թիւ 5, 2021, էջ 67–72

¹⁰ Այս նիւթի վերաբերեալ պաշտպանուած ատենախօսութիւն մը՝ D. A. WEST, Holistic Approach to Jesus the Nazarene in Matthew 2:23, A Senior Thesis submitted in partial fulfillment of the requirements for graduation in the Honors Program, Liberty University, Spring, 2018. <https://digitalcommons.liberty.edu/cgi/viewcontent.cgi?article=1824&context=honors>:

¹¹ Սոյն նիւթի վերաբերեալ տե՛ս AN KEON-SANG, An Ethiopian Reading of the Bible, Biblical Interpretation of the Ethiopian Orthodox Tewahido Church, James Clarke & Co, Cambridge, United Kingdom, 2015:

• Ինչո՞ւ տարբեր լեզուներու մէջ եւ մինչեւ իսկ հայերէն աշխարհաբար (եւ կամ Կ. Պոլսոյ իրականութեան մէջ թրքերէն) տարբեր թարգմանութիւններու միջեւ բնագրային տարբերութիւններ գոյութիւն ունին¹²:

Օրինական խնդիրներ¹³, որոնք առաւելապէս անհատական խօսակցութիւններու մէջ ի յայտ կու գան: Այս խնդիրները անձի խղճին եւ մտքին վրայ կրնան այնպիսի բեռ մը դնել, որ ի վիճակի է հաւատքի կեանքը խանգարել: Հարցումներու մի քանի օրինակներ՝

• Ինչո՞ւ չենք պահեր շաբաթը, որ տասնաբանեայի հրահանգիչ պատգամն է¹⁴:

• Հինկտակարանեան օրէնքներն ի զօրո՞ւ են ներկայ ժամանակներուն: Եթէ այո՞, ուրեմն ինչո՞ւ սնունդի, մաքրութեան եւ այլ օրէնքները չեն պահուիր քրիստոնեաներուն կողմէ: Եթէ ո՛չ, ապա ինչո՞ւ Տասնաբանեայ պատուիրանները կ'ուսուցանենք¹⁵: Ո՞ր մէկն ի զօրու է, եւ ո՞ր մէկը՝ ոչ:

Մարգարէութիւններու հեղինակութեան եւ մեկնաբանութեան վերաբերեալ խնդիրներ, որոնք կրնան շփոթ պատճառել՝

• Կարելի՞ է Հին Կտակարանի որեւէ յանդիմանութիւն, զգուշացում կամ անէծք, որ ուղղուած է Իսրայէլի ժողովուրդին, ուղղակիօրէն մեկնաբանել այսօրուայ որեւէ ազգի կամ ժողովուրդին համար:

• Հին Կտակարանի մէջ Աստուծո՞ւմէ եկած պատուհաններն ու պատիժներն այսօր ալ ի զօրու են:

• Եթէ օրէնքի եւ մարգարէութիւններու լրումը Քրիստոս է, ապա մենք այսօր պէտք ունինք տասնաբանեային եւ մարգարէութիւններուն:

¹² Շատ ընդարձակ ուսումնասիրութեան կայքէջ մըն է, ուր այս նիւթի վերաբերեալ բազմաբնոյթ հարցումներու պատասխանները տրուած են՝ <https://www.thecharaproject.com> [21.08.2024]:

¹³ Այս ծաւալուն ուսումնասիրութիւնը կը պարունակէ քառասուն հարցում-պատասխաններ՝ THOMAS R. SCHREINER, 40 Questions about Christians and Biblical Law (40 Questions Answers Series), Kregel Publication, Grand Rapids, MI, USA, 2010:

¹⁴ Այս նիւթը շատ տարբեր մեկնաբանութիւններ ունեցած է պատմութեան մէջ: Այստեղ կու տանք երկու օրինակներ միայն: Ընդարձակ անդրադարձ մըն է, որ կը ներկայացնէ Կաթողիկէ Եկեղեցւոյ տեսակէտը, ուր կը պատասխանէ շաբաթապահներուն պնդումներուն՝ <https://www.catholic.com/magazine/online-edition/should-christians-keep-the-sabbath-or-celebrate-the-lords-day> [21.08.2024]: Ուսումնասիրութիւն մը ալս նիւթի վերաբերեալ՝ R. J. BAUCKHAM (1982), “The Lord’s Day”, In Carson, D. A. (ed.), From Sabbath to Lord’s Day. Wipf & Stock Publishers/Zondervan, էջ 221–250:

¹⁵ Տե՛ս KEVIN DEYOUNG, The Ten Commandments: What they mean, Why they matter, and Why We should obey them (Foundational tools for Our Faith), Crossway, October 31, 2018:

• Փրկիպպոսի աղջիկները կը մարգարէանային. այդ մարգարէութիւնը նոյն հեղինակութիւնը կը կրէ Հին Կտակարանի մարգարէութիւններուն, օրինակ՝ Եսայիի մարգարէութիւններուն հետ:

• Պօղոս առաքեալի Ա. Կորնթացւոց թուղթին մէջ յիշատակուած մարգարէութիւնը պէտք է նոյն տրամաբանութեամբ հասկնանք, ինչպէս Հին Կտակարանի մարգարէներուն մէկուն կանխասացութիւնը: Ինչ է տարբերութիւնը:

Ընկերային եւ բարոյական խնդիրներ, որոնք խիստ այժմեական են եւ հրատապ պատասխան կը պահանջեն՝

- Մահապատիժն ընդունելի՞ է ըստ Սուրբ Գիրքի, թէ՞ ոչ¹⁶:
- Ինչպէ՞ս համաձայնեցնել ներելու գաղափարը, երբ անձ մը ծանր յանցանք գործած է եւ վնաս հասցուցած ուրիշներուն:
- Արհեստական վիժումն ընդունելի՞ է, եթէ մօր կեանքը վտանգի տակ է¹⁷:
- Միասնականութիւնն ինչո՞ւ է մեղք, եթէ այն մարդու կենսաբանական վիճակին հետ կապ ունի:

Վերոնշեալ օրինակները կարելի է տասնապատկալ: Մեր նոր ժամանակներու քննական միտքի հարցադրումներուն տրուած աւանդական մեկնաբանութիւններն այլեւս չեն բաւարարեր: Վտանգաւոր է ըսել՝ «Դուն չես հասկնար» եւ կամ «...այսպէս է, եւ այսպէս պիտի ընդունիս»: Համացանցի եւ փորձագիտութեան նոր դարու մտածելակերպը կը պահանջէ նոր, ընդարձակ եւ հիմնաւորուած բացատրութիւն, նոր վերլուծութիւն եւ քննութիւն:

¹⁶ <https://incommunion.org/2008/02/24/orthodoxy-and-capital-punishment/> յղմամբ կարելի է գտնել յօդուածներու շարք մը, որ Ուղղափառ Եկեղեցւոյ՝ մահապատիժ վերաբերեալ մօտեցումը ցոյց կու տայ: Հեղինակները կը մերժեն մահապատիժը եւ զայն հակառակ կը գտնեն քրիստոնէական ուսուցման: Իսկ <https://www.suscopts.org/q&a/index.php?catid=61> յղմամբ կարելի է գտնել Եգիպտական Եկեղեցւոյ մօտեցումը, որ արդար պայմաններու տակ կը պաշտպանէ մահապատիժի կիրառումը: Կը բաւարարուինք այս երկու հակադիր օրինակներով՝ նշելով, թէ համայն քրիստոնէութեան մէջ համաձայնութիւն գոյութիւն չունի, եւ իւրաքանչիւր Եկեղեցի, բողոքական համայնք ունի իր մօտեցումը:

¹⁷ Տե՛ս JOHN A. MCHUGH & CHARLES J. CALLAN, *Moral Theology: A Complete Course based on St. Thomas Aquinas and the Best Modern Authorities*, Joseph F. Wagner INC, New York, 1958, էջ 112–127ի մէջ կարելի է գտնել Կաթողիկէ Եկեղեցւոյ տեսակէտը տուեալ նիւթի վերաբերեալ: Նաեւ տես R. C. SPROUL, *Abortion: A Rational Look at An Emotional Issue*, Published by Ligonier Ministries, Ann Arbor, Michigan, 2010:

Բնականաբար, պէտք է նշել, թէ վերոյիշեալ խնդիրներն Աւետարանի փրկագործական պատգամին կեդրոնը չեն կազմեր: Քրիստոսի միջոցաւ եկած փրկութեան, յաւիտենական կեանքի եւ Աստուծոյ թագաւորութեան հռչակումը Սուրբ Գրոց ուսուցչի գլխաւոր պարտականութիւնն է: Սուրբ Գրոց ուսուցմամբ ան պէտք է սորվեցնէ, յոյս ներշնչէ, յանդիմանէ, խրատէ եւ մխիթարէ հաւատացեալը, յատկապէս՝ երիտասարդը: Սակայն վերոյիշեալներն անխուսափելի հարցումներ եւ խնդիրներ են, որոնց տրուած պատասխաններով եւ բացատրութիւններով ուսուցչի կամ հոգեւորականի խօսքը կը զօրանայ կամ կը տկարանայ: Եկեղեցին, համալսարանները, Աստուածաշնչային ընկերութիւնները եւ Աստուծոյ խօսքը քարոզող եւ ուսուցանող իւրաքանչիւր հաստատութիւն եւ անհատ պարտի լաւ գինուիլ, որպէսզի պատրաստ ըլլայ դիմագրաւելու վերոյիշեալ հարցերն ու կացութիւնները:

Այստեղ կ'ուզեմ նաեւ նշել օրինակներ կարգ մը խնդիրներու, որոնց պատասխանը կարելի է գտնել միայն Աստուծոյ խօսքին՝ Աստուածաշունչին պատգամին, Յիսուս Քրիստոսի միջոցաւ եկած փրկագործական աւետիսին մէջ: Այս օրինակներն աստուածաբանական կամ գիտական խնդիրէ առաւել երիտասարդներու առօրեայ կեանքին եւ կենցաղին հետ կապ ունին եւ պատասխան կը սպասեն:

Հետեւեալներն են ցայժմ մեր հանդիպած հարիւրաւոր հարցերէն քաղած օրինակները՝

Սեռային խնդիրներ՝

- Ինչպէ՞ս կրնամ մաքուր կեանք ապրիլ աշխարհի մը մէջ, ուր սեռային անբարոյականութիւնն այլեւս գովելի դարձած է, եւ մեր նմանները՝ մաքուր կեանքի փափաքողները, յիմար կը նկատուին:

- Ինչո՞ւ ընկերոջս/ընկերուհիս հետ սիրաբանելը (սեռային յարաբերութեան մէջ ըլլալ) սխալ է կամ մեղք, եթէ արդէն կը մտածեմ ամուսնանալ իր հետ: Աւելի լաւ չէ՞ նախքան ամուսնութիւն փորձն ունենալ¹⁸:

- Եթէ ընկերներէս մէկը միասեռական է, ի՞նչ պէտք է ըլլայ իմ մօտեցումը:

¹⁸ Ուղղափառ Եկեղեցւոյ մօտեցումը ցոյց տուող լաւ խորհրդածութիւն մըն է հետեւեալը՝ <https://orthochristian.com/46284.html>: Նաեւ լաւ ուսուցում մը կարելի է գտնել այս յոմամբ՝ <https://www.oca.org/orthodoxy/the-orthodox-faith/spirituality/sexuality-marriage-and-family/sexuality>:

• Ի՞նչ է Եկեղեցւոյ մօտեցումը միասեռականութեան¹⁹ եւ LGBTQ+ հարցին²⁰:

Ընկերային եւ ընտանեկան խնդիրներ՝

• Ամուսնալուծութիւնն ընդունելի՞ է, եթէ ընտանիքի մէջ կողմերէն մէկը շարունակ բռնութեան ենթակայ է:

• Օտար ազգի մը ներկայացուցչի եւ կամ ոչ քրիստոնեայի հետ ամուսնութիւնը մեղք է:

• Մանկանց կրօնքի առընչութեամբ աւելի լաւ չէ՞, որ իրենք ընտրեն իրենց հաւատքը եւ չպարտաւորուին իրենց ընտանիքներու կողմէ:

• Ինչո՞ւ ամուսնանանք եւ այսպիսի պարտաւորութիւններու տակ ըլլանք: Աւելի լաւ չէ՞ ազատ ըլլալ:

Տնտեսական խնդիրներ՝

• Կարելի՞ է «սպիտակ»²¹ սուտ մը խօսիլ՝ լուծելու համար այն խնդիրը, որ կը պատահի գործատեղիի մէջ:

• Ինչպէ՞ս կրնամ ուղիղ անձ ըլլալ տնտեսական այս պայմաններու տակ, երբ ամենուրէք խաբեբայութիւնը տարածուած է:

• Ինչպէ՞ս ապագայի յոյս ունենամ այս տնտեսական ճգնաժամերուն մէջ:

• Ամուսնութեան համար պէտք ունի՞նք մեծ դրամի: Ինչպէ՞ս կրնանք ամուսնանալ, երբ պայմաններն այսքան դժուար են:

Ապագայի հետ կապուած անորոշութեան խնդիրներ՝

• Ինչպէ՞ս ունենալ ապագայի յոյս, երբ կը տեսնենք, թէ աշխարհ շատ վատ հորիզոնի մը ուղղութեամբ կերթայ՝

¹⁹ Սուրբգրային մօտեցում մը կը ներկայացնէ հետեւեալ յօդուածը՝ ROBERT K. GNUSE, Seven Gay Texts: Biblical Passages Used to Condemn Homosexuality, BiBlical Theology Bulletin, vol. 45, № 2, էջ 68–87: Եզրպտական Ուղղափառ Եկեղեցւոյ մօտեցումը տես <http://www.coptic.net/articles/OnHomosexuality.txt> [10.08.2024], Ռուս Ուղղափառ Եկեղեցւոյ դիրքորոշումը տես <https://stjohndc.org/en/orthodoxy-foundation/christian-understanding-homosexuality> [10.08.2024]:

²⁰ Երբ Վատիկան միասեռական «զոյգերու» օրհնութեան խնդիրով հրապարակեց պապական կոնդակը՝ Fiducia supplicans, ինչպէս ամբողջ աշխարհի, նաեւ մեր Եկեղեցւոյ հաւատացեալներու եւ երիտասարդներու շրջանակներու մէջ մեծ աղմուկ բարձրացուց: Սոյն խնդիրը կը շարունակէ խանգարել շատերու միտքերը: Կոնդակի մասին տես <https://press.vatican.va/content/salastampa/it/bollettino/pubblico/2023/12/18/0901/01963.html#en> [10.08.2024]: Նաեւ պէտք է նշել, թէ այնքան շատ աշխատութիւններ հրատարակուեցան այս նիւթի շուրջ, որ աղբիւրներու շատ երկար ցանկ մը պատրաստել կարելի է: Մենք վերոյիշեալ քանի մը հրատարակութիւնով կը բաւարարուինք:

²¹ Այսինքն՝ սուտ մը, որ թէեւ սուտ է, բայց կը կանխէ որոշ դժուարութիւններ:

• Անհաւասարութեան, անարդարութեան, պատերազմներու, վայրագութեան, անբարոյականութեան, կարճ խօսքով՝ տմարդիութեան այս մթնոլորտի մէջ ինչպէ՞ս գոյատեւել: Կարժէ՞ այս աշխարհ երախայ բերել:

Ասոնք ամենամեղմ օրինակներն են: Չեմ խօսիր թագաւարակի դէմ ներարկումի, արհեստական բանականութեան, մարդկանց մարմնի մէջ դրուած թուաթիթեղներու²², սեռային գաղափարաբանութեան²³, որ մեծ քառս կը ստեղծէ Արեւմտեւորի մէջ եւ աստիճանաբար աշխարհով մէկ կը տարածուի, վերջին ժամանակներու վերաբերեալ մարգարէութիւններու, տարբեր գաղտնուում²⁴ հաստատութիւններու եւ միութիւններու, այլ կրօնքներուն առնչուող հարցումներու մասին: Աւելի չերկարենք:

Ջանացինք ամփոփ ցոյց տալ թէ ինչ մարտահրաւէրներ կան Սուրբ Գրոց ուսուցիչներու եւ հոգեւոր հովիւներու առջեւ: Այս ու նման հարցումները պէտք է պատասխան գտնեն մանաւանդ երիտասարդներու միտքերուն մէջ: Կարելի չէ երիտասարդութիւնը թողուլ առանց պատասխանի կամ պատճառ դառնալ, որ անոնք իրենց յուզող հարցերու պատասխանները փնտրեն արտագոյ չայ եկեղեցւոյ:

Ուստի՝ ինչպիսի՞ աշխատանքներ կարելի է տանիլ: Այժմ կ'ուզենք ներկայացնել որոշ առաջարկներ, թէ ինչերու կարիքը կայ արդիւնաբեր երիտասարդներու սուրբգրային ուսուցման եւ հոգեւոր դաստիարակութեան համար:

Մեր փորձառութիւնը ցոյց տուած է, թէ երեք կարեւոր առաքելութիւններ գոյութիւն ունին երիտասարդաց դաստիարակութեան մէջ՝ աւետարանչութիւն, Սուրբ Գրոց սերտողութեան խումբեր եւ սուրբգրային աշխատութեան զրուցակցութիւն:

Ա. Աւետարանչութիւն.

Պէտք կայ եկեղեցիներու, դպրոցներու, ակումբներու, ուր որ կարելի է կարճ, կտրուկ աւետարանչութեան ծրագրեր գործադրել: Երիտասարդաց հասանելի, անոնց կողմէ դիւրին ընկալելի քրիստոնէական հիմնական գիտելիքները փոխանցող աշխատանքներ պէտք է ի գործ դրուին:

²² Իմա՝ անգլ.՝ chip:

²³ Իմա՝ gender ideology:

²⁴ Իմա՝ ֆր.՝ ésotérique, հուն.՝ ἐσωτερικός — esōterikos, «ներքին, գաղտնի»:

Առանց քրիստոնեական հիմնական դաստիարակութեան կարելի չէ երիտասարդ մը համոզել որեւէ այլ բարոյական կամ քրիստոնեական ուսուցումի: Ուստի՝ առաջնային կը նկատենք աւետարանչութիւնը եւ քրիստոնեական հիմնական դաստիարակութիւնը:

Մեր՝ տարբեր Եկեղեցիներու հետ ունեցած յարաբերութիւններու մէջ հանդիպած ենք զանազան ծրագրերու, որոնք հասած են միլիոնաւոր անհատներու աշխարհով մէկ:

1. Կաթողիկէ Եկեղեցւոյ մէջ գտած ենք Սուրբ Հոգիով կեանք²⁵ դասախոհութիւնը²⁶: Ուշագրաւ էր, որ այս ծրագիրը տարբեր ցամաքամասերու մէջ տարբեր ձեւ ստացած էր: Միացեալ Նահանգներու²⁷, Ափրիկէի, Հնդկաստանի, Լիբանանի, Գերմանիոյ եւ Հարաւային Ամերիկայի տարբերակները յարմարացուած էին տուեալ երկրներու պայմաններուն²⁸, մշակոյթին եւ աւանդութեանը՝ միշտ Քրիստոսի խաչի միջոցաւ բերած փրկութիւնը, Ամենասուրբ Երրորդութեան՝ մարդկային փրկագործութեան համար կատարածը եւ Սուրբ Հոգւոյ ներգործութիւնը կենդրոն ունենալով: Այս դասախոհութիւնը կը գործածուի որոշ բողոքական համայնքներու կողմէ ալ:

2. Անգլիական Եկեղեցւոյ մէջ հանդիպած ենք «Ալֆա դասընթացը»²⁹ի: Թէեւ այս դասընթացըն առաջին անգամ երջանկայիշատակ Մեսրոպ պատրիարք (Մովսէսեան, 1998–2019 թթ.) մեզի տուած էր եւ պահանջած էր, որ հայերէնի թարգմանուի, դժբախտաբար, այդ թարգմանութիւնը կորսուեցաւ, երբ Սրբազան պատրիարքը հիւանդացաւ: Մեր ձեռքը ունեցանք անգլերէն եւ թրքերէն յարմարացուած տարբերակները:

²⁵ Այն է՝ Life in the Spirit:

²⁶ Լատիններ այս դասախոհութիւնը բնորոշած են seminarium եզրովը, որ է «ծառատունկ», «տնկարան», որտեղ աճեցնում էին բույսեր: Եւ բառի արմատն է «semen»ը, որ կնշանակէ «սերմ»:

Այս դասախոհութիւնն առաջին անգամ ժողովուած է 1970-ական թուականներուն՝ մանաւանդ համալսարանական երիտասարդներու համար: Առաջին շրջանին եղած է եօթը զուլիս, ուր կը բացատրուին Աստուծոյ սէրը, յետոյ՝ մեղքը եւ հետեւանքները, Քրիստոսի խաչի միջոցով փրկութիւնը, Սուրբ Հոգիով նորոգութիւնը, հաւատքի մէջ աճումը եւ Քրիստոսով կեանքը: Սակայն որոշ տարբեր բովանդակութիւններու ալ հանդիպեցանք:

²⁷ <https://www.stmva.org/lits.html> հասցէէն կարելի է հասնիլ անգլերէն բոլոր աղբիւրներու:

²⁸ Մեր ձեռքի տակ ունեցանք Ափրիկէի, Լիբանանի եւ Հարաւային Ամերիկայի գրքոյկները, որոնք, սակայն, պաշտօնական հրատարակութիւններ չէին եւ պատրաստուած էին տուեալ երկրներու յարմարացուած ձեւով:

²⁹ Այս դասընթացի վերաբերեալ մանրամասն տեղեկութիւն կարելի է ստանալ հետեւեալ հասցէէն՝ <https://alpha.org/>:

Աշխարհով մէկ տեսած ենք, թէ Անգլիական Եկեղեցիի առընթեր Կաթողիկէ եւ Ուղղափառ Եկեղեցիներ, բողոքական մայր հոսանքին պատկանող եւ բողոքական ազատ համայնքներ լայնօրէն կը գործածեն այս դասընթացը:

3. Վերջերս կարելիութիւնն ունեցանք Ղպտի Ուղղափառ Եկեղեցւոյ երիտասարդաց առաքելութեան լման ծրագիրն ունենալ, որ թէ՛ աւետարանչական է, թէ՛ քրիստոնէական ուսուցողական ծրագիր մըն է, որ ենթական կ'առաջնորդէ ունենալ՝ ճշմարիտ ու գիտակից հաւատք, Եկեղեցւոյ ուղղափառ դաւանանքի ուղիղ ընկալում եւ իւրացում, խորհուրդներու եւ եկեղեցական կեանքի գործօն մասնակցութիւն: Անոնք այս ծրագիրն ի գործ դրած են իրենց տարածուած բոլոր երկիրներուն մէջ: Նաեւ կը գործածեն երեսուն-երկու երկիրներու մէջ՝ այլ կրօնից համար իրենց աւետարանչական-քարոզչական գործունէութեան ընթացքին:

4. Նաեւ Կ. Պոլսոյ՝ Լատին Կաթողիկէ եպիսկոպոս գերաշնորհ Մասսիմիլիանօ Պալինուրօի հետ մեր զրոյցներու ժամանակ կարելիութիւնն ունեցանք ծանօթանալու Ալֆա-Օմեգա ծրագրին, որ թէ՛ քրիստոնէական նախնական ուսուցում մըն է, ինչպէս նաեւ՝ հիմնական գիտելիքներու դասաւանդում:

5. Աշխարհով մէկ ծառայութիւն տանող տարբեր քրիստոնէայ աւետարանչութեան քարոզչութիւն ծաւալող հաստատութիւններու հետ ալ ծանօթանալու եւ անոնց գործունէութիւնը քննելու առիթն ունեցանք, որոնց առաքելութիւնն աւելի կեդրոնացած է այլ կրօնքներու անդամներու ուղղեալ աւետարանչութեան վրայ: Անտեղի գտնելով մի առ մի յիշատակել անոնց անունները՝ կ'ուզեմ, սակայն, ըսել, թէ անոնց մօտ ալ գտած եմ զանազան աւետարանչութեան ծրագրեր, որոնք լաւ եւ խնամեալ կերպով պատրաստուած են:

Բնականաբար, կան նաեւ շատ տարբեր ծրագրեր, որոնք կը գործածուին տարբեր եկեղեցիներու կամ համայնքներու մէջ, որոնց շուրջ չեմ ուզեր աւելի ծաւալուիլ: Այստեղ ուզեցի ցոյց տալ քանի մը օրինակներ, որոնք ի պահանջէլ հարկին գործածելու կամ ուսումնասիրելու առիթն ունեցած եմ:

Հայ Եկեղեցին իրենը գտնելու, դաստիարակելու, պաշտպանելու եւ սրբութեան ճանապարհի մէջ առաջնորդելու պարտականութիւնն ու պարտաւորութիւնն ունի: Հայ Եկեղեցւոյ, հայ միջավայրին եւ մանաւանդ երիտասարդութեան համար անհրաժեշտ է ստեղծել նման համահայկա-

կան ծրագիր՝ արդի եղանակներով եւ համացանցի կողմէ ձեւաւորուած՝ նոր սերունդի միտքին հասանելի բովանդակութեամբ, որով կարելիութիւնը կ'ունենանք հասնելու հայ երիտասարդութեան եւ ներգրաւելու զանոնք Աւետարանի եւ Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ փրկարար միջնորդութիւն մէջ:

Բ. Սուրբ Գրոց սերտողութեան խումբեր.

Ինչպէս Կաթողիկէ Եկեղեցին ունի Լէքցիօ Տիւինայի³⁰ դրութիւնը եւ կամ բողոքականներու Պայպըլ Սթատի խումբերը³¹, նմանապէս որոշակի խումբեր պէտք է ստեղծուին ամենուրեք, յատկապէս եկեղեցիներուն սրահներուն եւ ակումբներուն մէջ, ուր երիտասարդներ, լաւ կազմաւորում ստացած առաջնորդներու կամ հոգեւորականներու հետ, կրնան խորացնել իրենց գիտելիքները՝ իրենց գործօն մասնակցութիւնը բերելով սերտողութեան մէջ: Պէտք չէ վախնալ երիտասարդներէն հասնելիք սխալ մեկնաբանութիւններէն, ընդհակառակը՝ առիթը պէտք է տրուի անոնց՝ աշխատութեան ու պրպտումի եւ հանդիպումներու ընթացքին իրենք զիրենք արտայայտելու, որպէսզի կարելիութիւնն ունենան իրենց ուղղութիւնը գտնելու: Մեր փորձառութիւնը ցոյց տուած է, թէ անհաւատալի հարստութեամբ եւ խորութեամբ հարցումներ կրնայ յղանալ երիտասարդ միտքը: Եթէ նման աշխատութիւններով իրենց առիթն ընծայուի, երիտասարդներ կրնան ունենալ առողջ միջնորդութ մը, ուր պիտի կրնան խորացնել իրենց գիտելիքը եւ պիտի կարենան ուղղութիւն ստանալ առնելու գործնական քայլեր՝ աւետարանական պատգամն իւրացնելու եւ զայն գործադրելու իրենց առօրեային մէջ: Այս աշխատանքը նաեւ դուրը պիտի բանայ անոնց առջեւ՝ եկեղեցական կեանքի եւ խորհուրդներու գիտակից եւ գործօն մասնակցութեան առումով:

³⁰ Լատ. Lectio Divina, հայ. Աստուածային ընթերցում) քրիստոնէական ավանդական եղանակ է՝ Սուրբ Գրոց աղօթական ընթերցման համար: Այս դրութեամբ պատրաստուած բազմաթիւ աշխատութիւններ գոյութիւն ունին: Մենք կը մէջբերենք լաւ պատրաստուած երկու աշխատութիւն, որ թէ՛ խորհրդածութեան եւ թէ՛ ուսումնասիրութեան յարմար բովանդակութեամբ ձեւակերպուած են՝ DAVID G. BENNER, Opening to God Lectio Divina and Life as Prayer, InterVarsity Press, Downers Grove, IL, USA, 2010 եւ TIM GRAY, Praying Scripture for a Change an Introduction to Lectio Divina, Ascension Press, West Chester, PA, USA, 2009:

³¹ Այն է Bible Study Group:

Գ. Սուրբգրային աշխատանքներու խորհրդածողովներ.

Այս հարթակներու վրայ երիտասարդութիւնը կարելիութիւնը կ'ունենայ իրենց հարցումներն ուղղելու մանաւանդ հոգեւորականներուն եւ աստուածաբաններուն: Սա առիթ կը ստեղծէ ամեն բանէ առաջ կոտորելու հոգեւորականի ու երիտասարդութեան միջեւ առկայ սառույցը: Նաեւ առիթը կու տայ երիտասարդներուն, որ անոնք իրենց հարցումներն ուղղեն եւ առողջ պատասխաններ ստանան: Երիտասարդներու հետ հանդիպումներու ընթացքին նկատած ենք անոնց իրաւացի անհանգստութիւնն այն առնչութեամբ, որ մեծ անդունդ մը կը զգան հոգեւորականներու, քարոզիչներու, աստուածաբաններու եւ իրենց միջեւ: Երբ այսպիսի աշխատանքներով երիտասարդներուն առիթ կ'ընծայուի, անոնք կրնան նոր մտերմութիւն ստեղծել «մեծերուն» հետ:

Նաեւ կ'ուզենք յատկապէս նշել, թէ Հայ Եկեղեցին պէտք ունի պատրաստելու գիրք կամ գրքոյկներ, որոնց մէջ պէտք է գտնուին այս յօդուածին առաջին բաժնին մէջ տրուած հարցերու եւ նմաններու պատասխանները: Եթէ մինչեւ իսկ Կաթողիկէ Եկեղեցւոյ հրատարակած Քրիստոնէականի³² կամ Ուղղափառ Եկեղեցւոյ Ստադի Պայպըլի³³ կամ աւետարանական աստուածաբաններու³⁴ պատրաստած լայնածաւալ հատորին չափ չըլլայ, բայց հոգեւոր հովիւներու եւ քարոզիչներու ձեռք բաւարար նիւթ պէտք է գտնուի, որ վաւերացուած ըլլայ Եկեղեցւոյ վերին իշխանութեան կողմէ եւ ցոլացնէ Հայ Եկեղեցւոյ՝ տուեալ նիւթի վերաբերեալ ուսուցումը եւ կամ մեկնաբանութիւնը:

Իբրեւ վերջաբան դիտելի է, որ մեր այս յօդուածով ջանացինք հակիրճ, աւելի փորձառութեան վրայ հիմնուած եւ գործնական դաշտի մէջ արդիւնքները որոշ չափով քննուած մեր տեսակէտները փոխանցել: Թուեցինք այն հարցումներն ու խնդիրները, որոնք կը յուզեն երիտասարդ-

³² Առաջին հրատարակութիւնը եղած է *Քրանսերէն՝ Catéchisme de l'Église Catholique*. Tours/Paris: Mame/Plon. 1992, *Իսկ անգլերէնը՝ Catechism of the Catholic Church*. Libreria Editrice Vaticana, 1994: *Թուային օրինակը տես* https://archive.org/details/catechismofcatho0000cath_h3c9/page/n5/mode/2up:

Մենք մեր ձեռքի տակ ունեցանք *Հայերէն համառօտ՝ Համառօտ Քրիստոնէական Կաթողիկէ Եկեղեցւոյ*, Libreria Editrice Vaticana, Citta del Vaticano, 2016 եւ *Թրքերէն՝ Katolik Kilisesi Din ve Ahlak İlkeleri*, çeviren Dominik Pamir, Yaylacık Matbaacılık, İstanbul, 2000 *օրինակները*:

³³ *Տես* The Orthodox Study Bible by St. Athanasius Academy of Orthodox Theology, USA, 2019:

³⁴ *Տես* Grudem, Wayne, Systematic Theology, an Introduction to Bible Doctrine, Zondervan, Grand Rapids, Michigan, USA, 1994:

ներու միտքը: Յոյց տուինք կենցաղային որոշ խնդիրներ, որոնք լուրջ մտահոգութեան մէջ կը թողուն երիտասարդութիւնը: Երեք գլուխներու մէջ բերինք մեր առաջարկները՝ ստեղծելու առաքելութիւններ:

Բնականաբար, սպառիչ աշխատանք մը չէ եւ բաց է զարգացումներու, քննադատութիւններու, մօտեցման փոփոխութիւններու եւ, վերջապէս՝ ամեն տեսակ առաջարկներու, քանի որ մեր նպատակն է այս նիւթը քննարկման եւ ուշադրութեան յանձնել:

Կ'ուզենք շեշտելով շեշտել՝ եթէ կը փափաքինք, որ հայ երիտասարդութիւնն առողջ ու արդիւնաբեր ապագայ մը ունենայ, անոնք մաս կազմեն Եկեղեցւոյ կեանքին եւ ճշմարիտ ու փրկարար մասնակցութիւն ունենան սուրբ Խորհուրդներու, ապա ասիկա կարելի է միայն Աստուծոյ ճշմարիտ Խօսքին քարոզութեամբ, առողջ դաստիարակութեամբ, որ կը հասնի արդիականացուած միտքերուն:

ԱՄՓՈՓՈՒՄ

Այս յօդուածը կուսումնասիրէ Սուրբ Գրոց կարեւորութիւնը բարոյական անկման արդի ժամանակաշրջանի մէջ եւ մանաւանդ հասցէագրուած է երիտասարդաց առաքելութեան: Օրինակներ տրուած են ներկայ դարու երիտասարդութիւնը յուզող զանազան նիւթերու շուրջ: Ամփոփ ցոյց տրուած է թէ՛ ինչ մարտահրաւէրներ կան Սուրբ Գրոց ուսուցիչներու եւ հոգեւոր հովիւներու առջեւ:

Յօդուածը նաեւ կը ներկայացնէ որոշ առաջարկներ, թէ ինչերու կարիքը կայ արդիւնաբեր երիտասարդներու սուրբգրային ուսուցման եւ հոգեւոր դաստիարակութեան համար:

Յօդուածը կը ներկայացնէ աւելի փորձառութեան վրայ հիմնուած եւ գործնական դաշտի մէջ արդիւնքները որոշ չափով քննուած տեսակէտներ, որոնք կարելի է օգտագործել կամ ձեւաւորել եւ կամ պարզապէս օրինակ ծառայեցնել՝ մանաւանդ երիտասարդութեան Սուրբ Գրոց դաստիարակութեան անհրաժեշտ առաքելութեան մէջ:

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Աստուածաշունչի ուսումնասիրութիւն, աւետարանչութիւն, սուրբգրային ուսուցում, արդի ժամանակներ, երիտասարդութիւն

РЕЗЮМЕ

Настоящая статья посвящена анализу значимости Священного Писания в контексте современного морального упадка, с особым акцентом на его роль в воспитании молодежи. Рассматриваются актуальные проблемы, с которыми сталкивается молодое поколение, а также вызовы, стоящие перед преподавателями библейских дисциплин и духовными наставниками.

В исследовании предлагаются конкретные рекомендации, касающиеся ключевых аспектов эффективного библейского образования и духовного наставничества. Представленные в статье взгляды основаны на практическом опыте и частично эмпирически проверены. Они могут быть адаптированы и использованы в педагогической и миссионерской деятельности, направленной на воспитание молодежи в духе Священного Писания.

SUMMARY

This study explores the significance of the Holy Scriptures in the context of contemporary moral decline, with a particular focus on their role in the spiritual and ethical formation of young people. It examines key challenges faced by modern youth and analyzes the difficulties encountered by educators and spiritual mentors in teaching the Holy Scriptures.

The article provides concrete recommendations on essential components of effective biblical instruction and the spiritual development of young people. The perspectives presented are grounded in experience and have been partially assessed in practical settings. These insights may be applied, adapted, or utilized as illustrative examples in the broader mission of fostering biblical literacy and moral guidance among youth.

